ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.02.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2022/33

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Բեստվոռկ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Տիգրան Մելքումյանի (լիազորագիր՝ տրված 01.02.2022թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.01.2022թ. թիվ 26/26-1/1437-2022 գրությամբ «Բեստվոռկ» ՍՊԸ-ին և Ա/Ձ Տիգրան Մելքումյանին (հետայսու նաև՝ Կոնսորցիում) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 20.01.2022թ. թիվ 1/18-2/3700-2022 գրության հիման վրա, 27.01.2022թ. թիվ 26/26-1/1437-2022 գրությամբ նախաձեռնել է «Բեստվոռկ» ՍՊԸ-ին և Ա/Ձ Տիգրան Մելքումյանին

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Բեստվոռկ» ՍՊԸ-ի և Ա/Ձ Տիգրան Մելքումյանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Կոնսորցիումը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/33 ընթացակարգի շրջանակներում 02.02.2022թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է «Բեստվոռկ» ՍՊԸ-ի ներկայացուցիչի Տիգրան Մելքումյանի մասնակցությունը նիստին, ով հայտնել է, որ «Բեստվոռկ» ՍՊԸ-ն Պատվիրատուին ուղղված գրությամբ հրաժարվել է պայմանագիրը կնքելուց, քանի որ պայմանագիրը կնքելու մասին ծանուցումը ստանալուց հետո, «Բեստվոռկ» ՍՊԸ-ի անձնակազմը ծանոթացել է կատարվելիք աշխատանքի ծավալուն բնութագրին և արդեն իսկ գործող հարկատու 3 համակարգին և եկել է այն եզրակացության, որ ընկերության կողմից համակարգը պատրաստելու դեպքում աշխատանքը կկատարվի PHP ծրագրային լեզվով, սակայն պարզվել է, որ հարկատու 3 համակարգը ամբողջությամբ պատրաստված է JAVA ծրագրավորման լեզվով: Այսինքն՝ ընկերության կողմից պատրաստվելու դեպքում համակարգը ևս կգործի անխափան, բայց արդեն այն չէր կարող աշխատել այնչափ ռացիոնալ, արագ և անխափան, ինչպես եթե պատրաստվի միայն JAVA ծրագրավորման լեզվով: Արդյունքում՝ «Բեստվոռկ» ՍՊԸ-ն որոշել է հրաժարվել պայմանագիրը կնքելուց՝ հետագայում խնդիրներից խուսափելու և ՀՀ պետբյուջեի համար ոչ ռացիոնալ ծախսեր առաջացնելու համար:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի այն հարցադրմանն, արդյո՞ք հնարավոր էր իրականացնել հրավերով պահանջվող ծառայությունը, ընկերության ներկայացուցիչը պատասխանել է, որ հնարավոր էր իրականացնել, սակայն ընկերությունը որոշել է հրաժարվել պայմանագիրը կնքելուց:

<u>3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 20.01.2022թ. թիվ 1/18-2/3700-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն իր կարիքների համար գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով հրատապ բաց մրցույթով կազմակերպել է ՊԵԿ-ՀԲՄ-ԽԾՁԲ-21/1 ծածկագրով «Ոչ ռեզիդենտ ԱԱՀ վճարողների համար ՀՀ ՊԵԿ էլեկտրոնային ԱԱՀ (e-VAT)» համակարգի ներդրման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման գնման գործընթաց, որի արդյունքում Համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով)՝ «Բեստվոռկ» ՍՊԸ և Ա/Ձ Տիգրան Մելքումյանը ճանաչվել է ընտրված մասնակից և պատվիրատուն սահմանված կարգով ընտրված մասնակցին ներկայացրել է առաջարկ՝ պայմանագիր կնքելու համար, սակայն Համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով)՝ «Բեստվոռկ» ՍՊԸ և Ա/Ձ Տիգրան Մելքումյանը որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելու առաջարկից:

Հաշվի առնելով վերոգրյալը, խնդրում եմ Ձեզ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 45-րդ կետի պահանջներին համապատասխան սահմանված կարգով ընթացք տալու համար»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/33 ընթացակարգի շրջանակներում 02.02.2022թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>4. ՍՑ-ՆԳ-2022/33 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/33 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կազմակերպվել է «ՊԵԿ-ՀԲՄ-ԽԾՁԲ-21/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Բեստվոռկ» ՍՊԸ-ն և Ա/Ձ Տիգրան Մելքումյանը՝ համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.12.2021թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Բեստվոռկ» ՍՊԸ-ին և Ա/Ձ Տիգրան Մելքումյանին (համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով)) ընտրված մասնակից ճանաչելու և անգործության ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով վերջինիս հետ պայմանագիր կնքելու վերաբերյալ:

3. «Բեստվոռկ» ՍՊԸ-ն ՀՀ պետական եկամուտների կոմիտեին ուղղված 14.01.2022թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

««Բեստվոռկ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Զաքարյանի, հանդիսանալով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար «Ոչ ռեզիդենտ ԱԱՀ վճարողների համար ՀՀ ՊԵԿ էլեկտրոնային ԱԱՀ (e-VAT)» համակարգի ներդրման խորհրդատվական ծառայությունների գնման ՊԵԿ-ՀԲՄ-ԽԾՁԲ-21/1 ծածկագրով մրցույթի հաղթող մասնակից, սույնով Ձեզ ծանուցում է, որ պայմանագիր կնքելու մասին ՀՀ ՊԵԿ-ի կողմից ծանուցումից հետո, օրենքի սահմաններում «Բեստվոռկ» ՍՊԸ-ի անձնակազմը ծանոթացել է կատարվելիք աշխատանքի ծավալուն բնութագրին (այն մանրամասներին, որոնք բացակայում էին հրավերով տրված տեխնիկական բնութագրում) և արդեն իսկ գործող հարկատու 3 համակարգին, եկել է այն եզրակացության, որ մեր ընկերության կողմից համակարգը պատրաստելու դեպքում աշխատանքը կկատարվի PHP ծրագրային լեզվով, սակայն պարզվեց, որ հարկատու 3 համակարգը ամբողջությամբ պատրաստված է JAVA ծրագրավորման լեզվով: Այսինքն մեր կողմից պատրաստվելու դեպքում համակարգը ևս կգործի անխափան, բայց արդեն այն չէր կարող աշխատել այնչափ ռացիոնալ, արագ և անխափան, ինչպես եթե պատրաստվի միայն JAVA ծրագրավորման լեզվով: Եվ երաշխիքային սպասարկումից հետո ամբողջ համակարգի սպասարկումը կլինի ավելի թանկ և խնդրահարույց ՀՀ ՊԵԿ-ի համար քան եթե համակարգը պատրաստված լինի ամբողջությամբ JAVA ծրագրավորման լեզվով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ «Բեստվոռկ» ՍՊԸ-ն եկավ այն որոշման, որ կհրաժարվի ՀՀ ՊԵԿ-ի հետ պայմանագիր կնքելուց՝ հետագայում խնդիրներից խուսափելու և ՀՀ պետբյուջեի համար ոչ ռացիոնալ ծախսեր առաջացնելու համար»:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 27.01.2022թ. թիվ 26/26-1/1437-2022 գրությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 20.01.2022թ. թիվ 1/18-2/3700-2022 գրությունը, «Բեստվոռկ» ՍՊԸ-ի դիրքորոշումը և գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

<u>բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց</u>,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցները կարող են գնման ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝

ա. հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիրը,

բ. հրավերով սահմանվում է, որ համատեղ գործունեության պայմանագրի կողմերից որևէ մեկը չի կարող նույն ընթացակարգին ներկայացնել առանձին հայտ: Սույն

պարբերության պահանջի չպահպանման դեպքում հայտերի բացման նիստում մերժվում են ինչպես համատեղ գործունեության կարգով, այնպես էլ առանձին ներկայացված հայտերը:

(…)

Կարգի 33-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ՝ համատեղ գործունեության (կոնսորցիումի) դեպքում մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն:…

Այսպես, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կազմակերպվել է «ՊԵԿ-ՀԲՄ-ԽԾՁԲ-21/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Բեստվոռկ» ՍՊԸ-ն և Ա/Ձ Տիգրան Մելքումյանը՝ համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.12.2021թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Բեստվոռկ» ՍՊԸ-ին և Ա/Ձ Տիգրան Մելքումյանին (համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով)) ընտրված մասնակից ճանաչելու և անգործության ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով վերջինիս հետ պայմանագիր կնքելու վերաբերյալ:

<u>«Բեստվոռկ» ՍՊԸ-ն, ՀՀ պետական եկամուտների կոմիտեին ուղղված 14.01.2022թ. գրությամբ հայտնել է հետևյալը.</u>

««Բեստվոռկ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Զաքարյանի, հանդիսանալով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար «Ոչ ռեզիդենտ ԱԱՀ վճարողների համար ՀՀ ՊԵԿ էլեկտրոնային ԱԱՀ (e-VAT)» համակարգի ներդրման խորհրդատվական ծառայությունների գնման ՊԵԿ-ՀԲՄ-ԽԾՁԲ-21/1 ծածկագրով մրցույթի հաղթող մասնակից, սույնով Ձեզ ծանուցում է, որ պայմանագիր կնքելու մասին ՀՀ ՊԵԿ-ի կողմից ծանուցումից հետո, օրենքի սահմաններում «Բեստվոռկ» ՍՊԸ-ի անձնակազմը ծանոթացել է կատարվելիք աշխատանքի ծավալուն բնութագրին (այն մանրամասներին, որոնք բացակայում էին հրավերով տրված տեխնիկական բնութագրում) և արդեն իսկ գործող հարկատու 3 համակարգին, եկել է այն եզրակացության, որ մեր ընկերության կողմից համակարգը պատրաստելու դեպքում աշխատանքը կկատարվի PHP ծրագրային լեզվով, սակայն պարզվեց, որ հարկատու 3 համակարգը ամբողջությամբ պատրաստված է JAVA ծրագրավորման լեզվով: Այսինքն մեր կողմից պատրաստվելու դեպքում համակարգը ևս կգործի անխափան, բայց արդեն այն չէր կարող աշխատել այնչափ ռացիոնալ, արագ և անխափան, ինչպես եթե պատրաստվի միայն JAVA ծրագրավորման լեզվով: Եվ

երաշխիքային սպասարկումից հետո ամբողջ համակարգի սպասարկումը կլինի ավելի թանկ և խնդրահարույց ՀՀ ՊԵԿ-ի համար քան եթե համակարգը պատրաստված լինի ամբողջությամբ JAVA ծրագրավորման լեզվով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ***«Բեստվոռկ» ՍՊԸ-ն եկավ այն որոշման, որ կհրաժարվի պայմանագիր կնքելուց ՀՀ ՊԵԿ-ի հետ՝ հետագայում խնդիրներից խուսափելու և ՀՀ պետբյուջեի համար ոչ ռացիոնալ ծախսեր առաջացնելու համար»:***

Միևնույն ժամանակ հարկ եմ համարում արձանագրել, որ ՍՑ-ՆԳ-2022/33 ընթացակարգի քննության նպատակով 02.02.2022թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի ընթացքում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի այն հարցադրմանն, արդյո՞ք հնարավոր էր իրականացնել հրավերով պահանջվող ծառայությունը, «Բեստվոռկ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը պատասխանել է, որ հնարավոր էր իրականացնել, սակայն «Բեստվոռկ» ՍՊԸ-ն որոշել է հրաժարվել պայմանագիրը կնքելուց, որի վերաբերյալ ընկերությունը գրությամբ հայտնել է Պատվիրատուին:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Միևնույն ժամանակ հարկ եմ համարում արձանագրել, որ «Բեստվոռկ» ՍՊԸ-ի (հետայսու՝ Գործընկեր 1) և Ա/Ձ Տիգրան Մելքումյանի (հետայսու՝ Գործընկեր 2) միջև 01.12.2021թ. կնքված համատեղ գործունեության պայմանագիր N 1-ի (հետայսու՝ Պայմանագիր) 2-րդ կետի 2.2 ենթակետի համաձայն՝ երրորդ անձանց հետ հարաբերություններում, այդ թվում սույն պայմանագրի 1.1 կետում նշված գնման ընթացակարգին (ՊԵԿ-ՀԲՄ-ԽԾՁԲ-21/1) մասնակցելու համար, կողմերի անունից ցանկացած գործարք կնքում է Գործընկեր 1-ը: Հաղթող ճանաչվելու դեպքում կողմերի անունից պայմանագիրը կնքում է Գործընկեր 1-ը, որի այդպիսի գործարքներ կնքելու իրավասությունը հավաստվում է սույն պայմանագրով:

Պայմանագրի 5-րդ կետի 5.2-րդ ենթակետով սահմանվում է, որ սույն Պայմանագրով համատեղ գործողությունների ընթացքում ստանձնած ընդհանուր պարտավորությունների համար կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով...:

Կարգի 33-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ՝ ***համատեղ գործունեության (կոնսորցիումի) դեպքում մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն*** :...

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2-րդ կետի 2.7-րդ ենթակետի համաձայն՝ ***<u>Մասնակիցները կարող են սույն ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝</u>***

1) համատեղ գործունեության պայմանագրի կողմերից որևէ մեկը չի կարող նույն ընթացակարգին (միևնույն չափաբաժնին) ներկայացնել առանձին հայտ: Սույն պարբերության պահանջի չպահպանման դեպքում՝ հայտերի բացման նիստում մերժվում են ինչպես համատեղ գործունեության կարգով, այնպես էլ առանձին ներկայացված հայտերը.

2) ***<u>Մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն:</u>*** Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

Այսպիսով՝ հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև ուսումնասիրելով ՀՀ պետական եկամուտների կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված հիմքերը, դրանք համադրելով գործում առկա ապացույցների և վկայակոչված իրավակարգավորումների հետ՝ արձանագրում եմ, որ գնման ընթացակարգին համատեղ գործունեության կարգով մասնակցած «Բեստվոռկ» ՍՊԸ-ն և Ա/Ձ Տիգրան Մելքումյանը թույլ են տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, քանի որ ընտրված մասնակից ճանաչվելուց հետո Պատվիրատուին 14.01.2022թ. ուղղված գրությամբ «Բեստվոռկ» ՍՊԸ-ն, որը համաձայն համատեղ գործունեության պայմանագրի, հանդես է գալիս կողմերի անունից, հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.01.2022թ. թիվ 26/26-1/1437-2022 գրությամբ «Բեստվոռկ» ՍՊԸ-ին և Ա/Ձ Տիգրան Մելքումյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և վերջիններիս ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**